



ՍԵՐԻԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՂԲԱՏԱՎԱՆՔՈՒՄ

Պատմա-մշակութային իր կարեռ գործունեության շնորհիվ, Հաղբատավանքը շատ վաղ իր վրա է հրավիրել ուսումնասիրովների ուշագրությունը, իսկ նրա հուշարձանների պատերին և շրջակայքում եղած արձանագրությունները հավաքվել և հրատարակվել են սկսել դեռևս 19-րդ դարի առաջին տասնամյակից: Ի վերջո դրանց լիակատար հավաքումը և օրինակելի հրատարակությունը իրագործեց Կ. Ղաֆարյանը՝ 1963 թվականին:

Բայց, այնուամենայնիվ, վերջին տարիներում Հաղբատավանքում կատարվող նորոգումների աշխատանքների ընթացքում գրտնը վեց մի նոր, մինչ այժմ անծանոթ, արձանագրություն, որն իր բովանդակությամբ անսովոր է և հետաքրքիր՝ պատմական տեսակետից:

Այդ արձանագրությունը մի խաչքարի վրա է: Բայց թե նախապես որտեղ է կանգնած հզել խաչքարը՝ հայտնի չէ. այժմ այն ընկած է վանքի պարսպի արևելյան կողմի մուտքի մոտի պահակատուն հանդիսացող շենքի կտորին: Այն հավանաբար օգտագործվել է այդ պահակատան կտորի նորոգումների ժամանակ, որպես հասարակ շինանյութ:

Ահա խաչքարի արձանագրված երեք կողմերի լուսանկարը (էջ 57):

Արձանագրությունը փորագրված է խաչքարի երեսին՝ խաչի թեսքի շուրջը, թիկունքին և հյուախային ներ կողին: Երեսին գրված մասը վնասվածքներ չունի: Երկրորդ հատվածը գրված է թիկունքին, 11 տողով: Այսեղ տողերի սկզբի և վերջին մասերում տեղ-տեղ մեկ-երկու սառերի շարդվածքներ կան, բայց որովհետև ամբողջ արձանագրությունը բաղկացած է անձնանունների ցանկից, ապա և մնացորդ մասերի օգնությամբ անսխալ վերականգնվում են: Միայն վերջին

տողի մեծ մասը խիստ չարդուտված է և տառերի առանձին մասեր են երկուուր:

Բոլոր անձնանուններն իրարից անջատվում են երկարավուն ձեւի վերջակետերով:

Երրորդ հատվածը գրված է հյուսիսային նեղ կողին և ավելի մանր տառերով: Վերին մասում 3—4 տողերի տեղ չարդուտված է և անընթեռնելի: Տողերի սկզբի և վերջին մասերում ևս տեղ-տեղ, մեկ-երկու գրեր, չարդված են, բայց վերականգնել հնարավոր է, նախորդի օրինակով: Վերջին տողում երկում է մի անվան մնացորդ տառերը: Այս մասում, որը նույնպես անձնանունների ցանկ է, անուններն իրարից կետերով չեն բաժանված, հավանաբար տեղի նեղվածքության պատճառով:

Արձանագրության երկրորդ և երրորդ հատվածներն իրար հետ կապվում են, որովհետև միայն անուններ են երկու մասումն էլ: Բայց առաջին և երկրորդ մասերը չեն կապվում: Այսպես, առաջին մասում հիշատակված է թվականը և գործող անձի անունը, որին բնականաբար պիտի հաշորդեք հուշարձանը կանգնեցնելու նպատակը՝ ինչպես հարյուրավոր նման գեպքերի օրինակներում: Այնուհետև, երկրորդ հատվածի սկզբում կա աշխարհ բառը, որին հետևում է անձնանունների շարանը: Աշխարհ բառը այս շարքին բերականապես չի կապվում, հետեւաբար իրենից առաջ եղած մի նախագասության վերջին բառն է նա: Նկատի ունենալով այս հանդամանքները և այն, որ խաչքարի վրա ուրիշ տեղ չկա գրելու համար, համարում ենք, որ այդ պակասող մասը պիտի գրված լիներ խաչքարի պատվանդանի արևմտահայաց երեսին և անմիջական շարունակությունը կաղմեր արձանագրության առաջին հատվածին և վերջում ունենար մի այնպիսի նախագասություն, որը վերջանար երկրորդ, թիկունքին



գրվածի առաջին՝ աշխարհի բառով, որպեսզի
արձանագրությունը իմաստով և քերականո-
րեն ամբողջանար:

Որ խաչքարն ունեցել է պատվանդան՝ դա
անկասկած է, որովհետև նրա երեք երեսնե-
րին գրված է արձանագրություն, որը ժխտում
է նրա պատի մեջ ագուցված, որմնախաչ լի-
նելու հանգամանքը: Ապա երեք երեսներին
գրված հուշարձանը պիտի կանգնած լիներ
բաց տարածության մեջ, որպեսզի մարդ կա-
բաց տարածության մեջ, որպեսզի մարդ կա-

բողանար շրջել և դիտել ու կարդալ բոլոր
կողմերում գրվածը: Բայց պատվանդանը կո-
րած է:

Նախքան պատճառաբանելը, առայժմ ա-
սենք, որ առաջին հատվածին պիտի հաջոր-
դեր պատվանդանի վրա մոտավորապես այն,
ինչ մեր վերձանության մեջ գրել ենք սովո-
րական տառերով:

Ահա արձանագրությունը լրացրած.

1. Խաչքարի երեսին

Ի ԹՈՒՒՅՈՒ: ՈՂԵ: (1246)
ՑԱՌԱ-
ՑՆՈՐԴՈՒԹ-
Ե(ԱՆ) ՏԾՐ. ՀԱՄԱ-
ԶԱՍՊ-
Ա.

2. Պատվանդանի վրա պիտի լիներ

[Կանգնեցաւ սր. խաչս ի
փրկութիւն (կամ յիշատակին)
հոգոց եկեղոցն առ մեզ (կամ
ի Հայո) վարդապետացն Հոռոմո]

3. Խաչքարի թիկոնքին

[Ց]ԱՇԽԵԱՐՁԻ: ԴՈՄԵՆՏԻ-	•	•	•	•	•
ՆՈՍ: ԿԻՐԱԾՈՒ: ՎԱՂԵՅՈՒ:	•	•	•	•	•
ԵԽՏԻՔՈՍ: ԵԽՆԻԿԻՈՍ: ՎԱՂ-	•	•	•	•	•
ԷՆՏԻԱՆՈՍ: ՓԳԱԲԻՈՍ: Մ-	•	•	•	•	•
[ԱՐ]ԱԳԴԻՈՍ: ՍԻՍԻԱՆՈՍ: ՊԵՒ-	•	•	•	•	•
[Ո]ՆԴԻՈՍ: ՄԵՂԵՆՏԻՈՍ: ՍԵԽԵՐԻ-	•	•	•	•	•
[Ա]ՆՈՍ: ՓԻԼԵԿՑԻՄՈՆ: ԱՆԿ-	•	•	•	•	•
[Է]ՈՍ: ԵՐԱԿԼԻՈՍ: ԷԳԳԵԿԻՈՍ:	•	•	•	•	•
[ԿԵ]ՐԻՈՆ: ԱՒԵՏԻՈՍ: ԱՂԵՔՍ-	•	•	•	•	•
[ԱՆ]ԳՐՈՍ: ԱՆԱԿԻՈՍ: ՎԱՂԵՔԻ-	•	•	•	•	•
[ՆՈՒ] ԴՈ- ՄԵՆԵՆՈՍ	•	•	•	•	•
ՈՐՈԳԻՆԵ-					
Ո ԱԹԱՆԱ- ՏՈՍ ԹԵՇՈ-					
ԳՈՒԽԵՈՍ [Գ- Ր]ԵԽԱԿՈՍ [Թ- ԷՐՓԻԵԼՈՍ] ՄԵՂԵՏԻՈՍ Ա]					
• • Ակն					

4. Խաչքարի կողին

Ո ՍԱԿԱ- ՇԻ Ո	•	•	•	•	•
Ո ԱԳԻ- ՇԻ Ո					
Ո ԱԹԱՆԱ- ՏՈՍ ԹԵՇՈ-					
ԳՈՒԽԵՈՍ [Գ- Ր]ԵԽԱԿՈՍ [Թ- ԷՐՓԻԵԼՈՍ] ՄԵՂԵՏԻՈՍ Ա]					
• • Ակն					

իր այս տեսքով՝ արձանագրությունը պարզում է, որ 1246 թ. Հաղբատավանքի առաջնորդ Համազասպի օրոք, կանգնեցվել է այս խաչքարը ի հիշատակ այն մարդկանց, որոնց անունները մեկ առ մեկ հիշատակված են արձանագրության մեջ: Լրիվ պահպանված և վերականգնված անունները 33 հատ են: Թիկունքի արձանագրության վերջին, չարդպած տողում կարող էր տեղավորվել Յ, ներ կողի վերևի վնասված շորս տողերում՝ 4, և ներքեվում՝ 1, որով բոլոր անունների թիվը կլիներ 40—41 հատ: Այս բոլոր անձնանունները տառադրությամբ և ու վերջավորությամբ զուտ հունական տեսք ունեն: Դեռ ավելին, դրանց մեջ կան տասնյակից ավելի անուններ, որոնք ավելի արիստայիկ են և, ասենք, 10-րդ դարում նույնիսկ բյուզանդացիների մոտ գործածական չէին այլև:

Բայց և այն ընդհանուր բրիտանիական անունները, որոնք վաղուց ի վեր հայացի ձեղով գրելու սովորություն կար մեղանում, գրված են հունական: Օրինակ՝ Ավետիս=Ավետիս:

Հայ վիմական արձանագրությունների մեջ չկա այսպիսի՝ միայն անունների ցանկ պարունակում մեկ ուրիշը: Միաժամանակ գոյություն շոնի հունարեն կամ հունածե տառադրությամբ անունների այսպիսի մի մեծ փունք:

Այս անսովոր երեսովի հավանական բացատրության համար՝ հարկ է դիմել մեր պատմագիրներին և հայագիտությանը, ուր իրոք որ կան երեսովիթը բացատրող փաստեր:

Հայ բանասիրության մեջ ընդունված է, որ 10-րդ դարի սկզբում Հայության միաժամանություններ ու վանքեր առաջացել են Բյուզանդիայի կայսեր՝ Ռոմանոսի (919—944) հալածանքներից փախած և Բագրատունի թագավորներից տիրություններում ապավինած միաբնակ հոգևորականների ձեռքով:

Հնագույն մատենագիրը, որը հաղորդում է այս փաստը, Սսովիկն է, որը թվարկելով 10-րդ դարի սկզբում ծավալված վանական շինարարությունը, գրում է.

«Նախ առաջին՝ մեծահոչակ ուստան Կամբրչաձորոյ ի գաւառին Արշարունեաց, որոյ առաջնորդ հայր Յոհաննէս, որ հալածեալ յարեմտեայ աշխարհէն, յեգերացուց գաւառէն, ի բաղկեդանական մարդաբան աղանդիցն, բերեալ ընդ իւր գիրաշագէն հշանեն տէրունական»²:

¹ Այս դիտողությունը և վնասված անունների սոույզ տառադրությունը կատարելու գործում մեզ օգնել է բյուզանդագետ Հ. Բարտիկյանը:

² Ստուփանոսի Տարօնեցոյ Ասողկան—Պատմոթիւն միթեղբական, 1885 թ., էջ 173, Պետերբուրգ:

Այս դեպքին անդրադարձել են մեր 13-րդ դարի պատմագրեր կ. Գանձակեցին³ և Վարդանը՝ ավելի հանգամանորեն⁴: Ժամանակակիցների համար այս գեպքը նշանավոր երկույթի եղել, և այդ առթիվ, ըստ երկույթին, ստեղծվել են նաև հատուկ գրություններ՝ ավելի մանրամասն ու հանգամանալից նկարագրություններով: Դրանցից մեկը Ղ. Ալիշանի ձեռքն է հասել իր նշանավոր «Այրարատ»-ը ավարտվելու պահին և տեղավորվել է այդ աշխատության վերջում՝ հավելվածի ձեռքով⁵:

Վենետիկի ձեռագրաց ցուցակից այժմ պարզում է, որ այդ գրությունը գտնվում է Ուկեփորիկ կոչվող մի ժողովածուի մեջ, որն ըստ ցուցակը կազմողի՝ 10—11-րդ դարերի գրչություն է: Վերնագիրն է՝ «Պատմոթիւնն ա. Կենարարին և սոսկալի ս. Նշանին թէ որպէս բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կամբրչաձորոյ»⁶:

Բյուզանդական երկրամասերից Հայաստան եկած հոգևորականների առնչությունը Հաղպատավանների նորահայտ արձանագրության հետ պարզելու համար՝ անհրաժեշտ է պարզաբանել հետեւյալ հարցերը: Բյուզանդիականի ո՞ր գավառներից են եկել փախստական հոգևորականները, ի՞նչ ազգության են պատկանել նրանք, որպա՞ն է եղել եկողների մուտքոր թիվը և, վերջապես, ո՞ր վանքերն են շնուցը կամ հիմնադրել Հայաստանում: Այս հարցերի պատասխանները պետք է որոնենք հալածանքների գեպքը հիշատակող մեր պատմագրների մեջ, ուստի և հարկ է մեջ բերել նաև կ. Գանձակեցու և Վարդանի համապատասխան հատվածները:

Կ. Գանձակեցին հաղորդում է՝

«...Սա (Խոմանոս) հալածեաց զամենայն կրօնաւրու և զիանանայս հայոց, որք կին յաշխարհին Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի: Եւ եկեալ յաշխարհը Հայոց յատուն Արասայ, որդույ Արմբատայ հաստատեցին վանորայս՝ զկամքրչածոր, և զկապուտքարեն ի զաւառին Արշարունեաց, և զիոշականնենն Հոռոմոսին կոչեցիւալ վաճեն, և զդարեվանեն ի Շիրակ զաւառին: Հինեցին և եկեղեցի մի յանում ամենա-

³ Կիրակոս Գանձակեցի-Պատմոթյուն Հայոց, էջ 84—85, 1961 թ., Երևան:

⁴ Հաւարամն պատմոթեան Վարդանայ վարդապետի, էջ 88, 1962 թ., Վենետիկ:

⁵ Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 467—469, 1890 թ., Վենետիկ:

⁶ Հ. Բարսեղ Վ. Սարգսեան—Մայր ցուցակ Հայերեն ենուագրաց Մատենագրանին Մխիթարեանց ի Վենետիկ, Հատուր Երկրորդ, էջ 994:

սուրբ Աստուածածնին ի վաճեն, որ կոչի Սահմանին...»⁷:

«Կարդանը գրում է.

«Ի սուրա առուս (Աքաս թագրատունու) յոյժ բազմութիւնն կրօնաւորաց հալածեալի ի նոռումոց աշխարհին սակա ուղղափառութեան, եկեալ յաշխարհս մեր շինեցին յոյն վանուրայս: Նախ զկամրջանոր, ապա զչոռուսուսին կոչեցեալ վաճեն, որպէս թէ ի Հռոռմոց կողմացն եկին, և զերպավաճեն ի նոցանել ասեն շինեալ զՍահմանին սուրբ Աստուածածին»⁸:

Եկվորների նախական տեղի հարցը

Ինչպես տեսանք, այս գեպքի հնագույն հիշատակողը Ասողիկն է, բայց պատմագիրը եկվորներից մի խմբի մասին է միայն հիշատակում՝ Հովհաննես վարդապետի գլխավորությամբ, որի մասին ասում է. «յարեմտեայ աշխարհին, յեգերոցոց գաւառէն»:

Եգերացոց գավառը այժմյան Արխազիան է, որ հավանաբար այդ Հովհաննեսի ծննդավայրն է եղել միայն, որովհետև Ոսկեփորիկի գրությունը, որը փաստորեն հենց այդ նույն Հովհաննեսի վարքն է, ոնի ավելի մանրամասն տեղեկություններ նրա մասին: Բայց պրության՝

«Զայնու ժամանակաւ փայլէր առաջինութեամբ հայր Յովհաննէս յաշխարհին կիկանտեացաց, ի մենաստանին, որ կոչէր Կամրջանոր... և բնակեալ էին ի տեղուցն յայնմիկ ընդ հօրեն Յովհաննեսի ողիք իրեւ ժառասուն»:

և թիւ հետո՝

«Եւ եկեալ (Հովհաննեսը) տարադէմ յաշխարհին կիկանտեացոց...»⁹:

Ալիշանը մանրամասն քննությամբ հաստատում է, որ կիկանտոն գավառը Փոքր Հայքում էր, Կեսարիայի և Մելիտինեի արանքում:

Հովհաննեսը իր քառասուն վանականներով ներկայացել է Աքաս թագավորին և Արշարունիքում էլ իր հիմնադրած վանքը կոչել է՝ Փոքր Հայքում իր ղեկավարած վանքի անունը՝ Կամրջաձոր¹⁰:

Կ. Գանձակեցին այս մասին անորոշ հիշատակություն ունի՝ «յաշխարհին Հոռումոց», նույնը և Վարդանը՝ «ի հոռումօց աշխարհին»:

Այս տեղեկություններից հետեւում է, որ հալածական հոգևորականների նախնական

⁷ Կ. Գանձակեցի, Պատմոթյուն Հայոց, էջ 85:

⁸ Վարդան, Հաւաքումն Պատմոթիան, էջ 88:

⁹ Ալիշան, «Այրարատ», էջ 547:

¹⁰ Ալիշան, «Այրարատ», էջ 547:

բնակավայրը Փոքր Հայքի գավառներն են, որն ունեն բազմազգի բնակչություն, և ուր հայերը նույնպես ընուց անտի բնիկ և զգացի թիվ էին կազմում:

Եկվորների թվի հարցը

Այս մասին Կ. Գանձակեցին գրում է՝ «Սա (Ծովմանոս) հալածեաց զամենայն կրօնաւոր և զահանայս հայոց....»:

Իսկ Վարդանը՝ «Յոյժ բազմութիւնն կրօնաւորաց հալածեալք...»:

Ոսկեփորիկի գրությունը, որն ինչպես նրավեց, Փոքր Հայքի Կամրջաձոր վանքի միարաններին է վիրաբերում, հիշատակում է՝ «ընդ հօրեն Յովհաննեսի ողիք իրեւ ժառասուն»:

Այս բոլորից կարելի է հետեւնել, որ Հայաստան փախած Հոգևորականների թիվը շատ մեծ է եղել, բանի որ միայն մեկ՝ Կամրջաձորի վանքից 40 հոգին են եղել, ապա որովհետև հալածանքը ընդհանուր է եղել բոլոր միաբանների նկատմամբ, ուրիմն և բազմաթիվ վանականներ փախած կլինեին, մանավանդ, որ Գանձակեցին հիշում է, որ ոչ միայն վանականներն են հալածվել, այլև բահանաները՝ «զամենայն կրօնաւոր և ժանանայս»:

Հայաստանում Եկվոր հոգևորականների շենացրած կամ հիմնարկած վանքերի հարցը

Վերևում մեջ բերված աղբյուրների մեջ անվանապես հիշատակվում են հետեւալները.

1) Կամրջաձորի վանք Արշարունիքում (Ասողիկ, Գանձակեցի, Վարդան, Ոսկեփորիկի գրություն):

2) Կապուտքարի վանք Արշարունիքում (Գանձակեցի):

3) Հոռոմոսի վանք Շիրակում (Գանձակեցի, Վարդան):

4) Դպրեվանք Շիրակում (Գանձակեցի, Վարդան):

5) Աստվածածին եկեղեցի Սանահնում (Գանձակեցի, Վարդան, Սանահնի Քոթուկ):

Պատմական և տեղագրական բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ հավաստվում է ինչպես փախստական վարդապետների Հայաստան գալը, այնպես և այս ցանկում նրաված հինգ վանքերի շենացրումը կամ հիմնադրումը նրանց միջոցով: Միայն Հ. Հ. Ոսկեանն իր աշխատաւթյան մեջ այս ցանկին ավելացնում է նաև Հայությանը՝ Հայությանը¹¹:

¹¹ Գուգարքի վանքերը. գրեց գկտ. Հ. Հ. Ոսկեան, էջ 92—93, Վիեննա, 1960:

Ոսկեփորիկի գրությունը հիշատակում է երկու տեղանուններ ևս. Հովհաննեսի գլխավորությամբ եկած վանականները, երբ որոնում էին հարմար տեղ Արշարունիքում՝ վանք հիմնելու համար, հանդիպում են մի հարմար վայրի, որը կոչվել է Սակրէվանք և մի ուրիշը, որը կոչվել է Մանէվան, և այդ վերջինուու շինել են իրենց հիմնական վանքը, որը իր տեղադրությամբ նման էր կիշանտինոի երկրում եղած իրենց հին վանքին:

Եկվոր հոգևորականների ազգության հարցը

Նշեցինք, որ Փոքր Հայքին ուներ բազմազգի բանակություն: Իշխանությունների հալածանքները եղել են, ինչպես սովորական էր միջնադարի համար, ոչ թե ազգային, այլ գավանաբանական հողի վրա, հալածանքի են ննթարկվել տիրող քաղկեդոնական երկարնակ պետության և եկեղեցու կողմից միաբնակ գավանության պատկանողները, իսկ այդպիսինները ոչ միայն հայերն էին, այլև որիշ ազգություններ կամ նրանց հատվածներ և նույնիսկ հույներ: Հետևաբար և փախած ու Հայաստան ապավինած հոգևորականները միայն հայեր չեն եղել: Մեր մեջբերած աղբյուրներից Ասողիկը եկվորների ազգությունը շին նշում, Վարդանը նույնպես: Միայն՝ սակա ուղղափառութեան, որը իր հասկացողությամբ միայն միաբնակներն են: Միայն Գանձակեցին պարզ հիշատակում է՝ «զամենայն կրօնավորս և քահանայս հայոց», բայց և վերջում նշում է, որ նրանց անվանում էին «հոսումց երէց», այդ պատճառով էլ Շիրակում նրանց հիմնարկած վանքը կոչվեց «Հոսումցի վանք»:

Դավանաբանական հողի վրա նման հալածանքներ թյուզանդիայում եղել են հաճախակի և ավելի ուշ շրջաններում ևս: Այսպիսի մի դեպքի մասին հիշատակում է Վարդանը 1186 թվականի դեպքերի նկարագրության մեջ, ուր մեր այս հարցադրման վերաբերյալ հետաքրքիր տեղեկություն կա.

«Եսկ ի վերայ Յունաց բագաւրեաց Փիսիկն որ և Սահակ, և յարոյց հալածան և շարշարան հայադաւան ազգաց, զի դարձին յաղանդ եոցա. վասն որոյ գոէ առ նա աղերսան պատրիարքն Գրիգոր խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ լուաւ նմա, այլ զյուրվս դարձոյց ի կրօնս իւր, և զայլս հալածական արար ուր կային երեք եպիսկոպոսի արռոնք և հազար և վեց հարիւր քահանայից»¹²:

Այս հատվածի մեջ հետաքրքիր է, որ հաւածականները անվանվել են նայապալան ազգեր, որը աներկմիտ պիտի թարգմանել միաբնակ ազգեր: Այս մտքին օժանդակում է և հալածականների թվի մասին հայտնածը՝ երեք եպիսկոպոսական Աթոռներ և 1600 բանաններ: Կրոնական տեսակետից նույնագավան համայնքները կամ անհատները ենթարկվում էին գավանակից հոգեոր իշխանությանը՝ անկախ ազգային պատկանելությունից, որը միջնադարի պայմաններում առաջնակարգ տեղ է ունի:

Բանասիրական աշխատությունների մեջ փախստականները սովորաբար հայ հոգևորականներ են համարվել¹³, բայց ավելի ստույգ և ընդունելի ենք համարում Ալիշանի կարծիքը, որը գրում է.

«Ե զալ Յունաց և Հայոց ոմանց հալածելոց ի կայսերաց Թիզանիոյ՝ յառաջին կես Ժարու...»¹⁴:

Եկվորների ազգությունը պարզելու համար կարող է որոշ նշանակություն ունենալ նրանց անձնանունները: Բայց հայտնի է, որ հոգեոր դասի մեջ տարածված անձնանունների մեծ մասը կրոնական գրքերում ավանդված անուններն են: Եթե այդպիսինների մեծ մասը դարերի ընթացքում Հայաստանի հողի վրա հայացի և հայանց լուսն ձև են ստացել, ապա բյուզանդական երկրներում ապրող նույնիսկ հայերի մոտ պահպանվել են հունական ձեփով, մանավանդ որ, անկախ գավանաբանական վեճերից, քաղկեդոնական ուղղության հաստատումից առաջ եղած եկեղեցու հայրերը միշտ էլ պահպանել են հայերի մոտ իրենց հեղինակությունն ու հմայքը նաև բուն Հայաստանում:

Այնուամենայնիվ եկվորների անձնանուններին անդրադեշտ է:

Հայաստան ապավինած հոգևորականների կամրջածորի 40 հոգուց բաղկացած խմբի միայն մեկի՝ նրանց առաջնորդ Հովհաննեսի անունն է հիշատակում Ասողիկը, մյուս պատմագիրները ոչ մի անուն չեն հիշատակում:

Ոսկեփորիկի գրությունը Հովհաննեսից բացի հիշատակում է նրա «Հարազատափ» (իմա՝ եղբոր) Պողիկարպոսի անունը: Եթե Հովհաննեսը փախստական խմբի զնկավարն ու Արշարունիքում Կամրջածորի հիմնադիրն ու ծաղկեցնողն է, որի վանականների թիվը կազմում էր 300 հոգի, ապա Պողիկարպոսը, որը հաշորդեց իր եղբորը, դարձավ հայ եկե-

¹² Կոստանեանց, Հայոց վանքերը, էջ 43, 1886 թ., Մոսկվա:

¹³ Հ. Հ. Ասկեան, Գուգարքի վանքերը, էջ 92—93, և ուրիշներ:

¹⁴ Ալիշան, «Այրարատ», էջ 58:

ղեցու Հեղինակավոր վարդապետներից մեկը. նա մասնակցեց Անիի եկեղեցական ժողովին՝ գահընկեց անելու համար Վահան կաթողիկոսին՝ 966 թվականին: Մի երրորդ անուն էլ պահպանել է Սանահնի «Քոթովը», նույնպես Պողիկարպոս, որը ըստ արդ հիշատակարանի՝ «...սկիզբն արար վանիցս շինուրեան»¹⁵:

Եսպիսով, հալածական Հոգևորականների միայն երեք անուն է պահպանվել աղբյուրներում՝ Հովհաննես և երկու Պողիկարպոսներ, բոլորն էլ Կամրջաձորի խմբից:

Արդ, կարող է արդյոք Հաղբատավանքում կանգնեցրած խաչքարը եկվոր վարդապետների այս խմբի հիշատակին լինել: Մերձեցնող հանգամանքը եկվորների և արձանագրության մեջ հիշատակված անունների քանակի մոտիկությունն է՝ մոտավորապես քառասուն. Բայց այդ խմբի այն երեք անունները, որ հնար եղավ գոնել աղբյուրներում, բացակայում են արձանագրության մեջ: Եթե ենթադրենք, որ դրանք եղել են շարդութված տեղերում, ապա գոնե դրանց առաջնորդ Հովհաննեսի անունը պիտի լիներ ցանկի առաջին տեղում, իսկ այնտեղ Դոմենտիոն անունն է: Կարելի է ենթադրել, որ պատվանդանի վրայի մեր լրացված մասում է եղել Հովհաննեսի անունը՝ հատկապես նշված լինելու համար, բայց դա կմնա չհիմնավորված ենթադրություն միայն:

¹⁵ Ա. Զալալեան, Շահապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 43, 1842 թ., Տփիս:

Նախորդ էշերում պարզեցինք, որ Կամրջաձորի խումբը միակը չէր, որ ապաստանել էր Հայաստանում 10-րդ դարի առաջին կեսում: Ապա տեսանք որ ըստ Վարդանի Հաղորդման նման մի մեծ հալածանք էլ միաբնակների նկատմամբ տեղի է ունեցել 1186 թվականին, որի ընթացքում հալածանքի են ենթարկվել 1600 հոգևորականներ, և որ Բյուզանդիայում նման հալածանքներ կրկնվել են պարբերաբար: Այդ իսկ պատճառով էլ, նըկատի ունենալով նորահայտ արձանագրության մեջ հիշատակված անձնանունների հունական ձեր, համարում ենք անկասկած, որ այնտեղ հիշատակված են Հայաստանում ապաստան գտած մի այնպիսի խումբ եկվոր հոգևորականներ, որոնք տեղավորվել են գիւավորապես Հաղբատավանքում և նրա մոտակա վայրերում:

Այս նորահայտ արձանագրությունը հավասում է մեր պատմագրերի հաղորդածները՝ բյուզանդական պետական հալածանքներից Հայաստան ապավինած հոգևորականների մասին հաղորդած տեղեկությունները: Հաստատում է, որ հալածանքի հիմքում ընկած է եղել ոչ թե աղքային, այլ գավանարանական խնդիրը: Որ Հայաստան ապավինածները ոչ միայն հայեր են եղել, այլև հույներ: Որ չնայած Բյուզանդիայում քաղկեդոնականության պետական տիրապետող հանգամանքին, նրա գոնե արևելյան մարզերում միաբնակները զգալի թիվ են կազմել, որոնց մեջ և հույներ:

